հայոց գերեզմանատունը մանգալու։

Գերեզմանոցից վերադառնալիս այս անգամ ինձ տարան յատկապէս ինձ համար պատրաստված սենեակը։ Մի փոքրիկ սպիտակացրած գեղեցիկ ննջարան էր, որի յատակը փռած էր Խորասանի թանկագին գորգով և նորա երեք եղերքները մետաքսեայ գահոյներով (դոշակ) և մետաքսեայ ոսկեկար բարձերով։ Զախ անկիւնում շինել էին մի փափուկ գահաւորակ, ուր ես խանի նման նստած խմեցի թէյը և ծխեցի սաթով զարդարած երկար չիբուխը։ Երեկոյեան ծառան հարցրեց, հրամայո՞ւմ էի արդեօք իրիկնահաց մատուցանել։ Հրամայեցի... իսկոյն մի մեծ մաքուր նոր անագած պղնձէ մատուցարանի (սինի) վերայ բերին Էնբերբու բրընձից եփած փլաւը, որի վերայ դրել էին տապակած և խաշած հաւեր։ Պէտք է խոստովանել, որ խանը տալիս էր ինձ մի իշխանական ճոխ ընդունելութիւն, որ նշանաւոր էր իւր անսպասելի շքեղութեամբ և մաքրութեամբ։

Բոլոր կահ կարասիները կարծես նոր լինէին և առաջին անգամ գործածվելիս։ Սենեակը լուսաւորված էր ութ ապակեայ քամու աշտանակների Եւրոպական մոմերով։ Դրանք շարված էին կարգով սենեակի մէջ տեղը, որոնք բոլորն էլ կարծես գործարանից նոր էին ստացվել։

Ընթրիքից զկնի սպասաւորը յայտնեց, որ խանը ցանկանում էր այցելել ինձ, եթէ այդ